Տահշուբ գեղի՝ Գրիգոր Ալ-Բայիսի եպիս-
կոպոսին շինած Ս. Աստուածածնի եկե-
ղեցւոյն աւրուիլն ի հակառակութեան Ռա-
յիհանեանց և Ճիւյիւշեանց՝ յիշելէն ետեւ,
Աբուսահլ՝ Նեղոսի արեւմտեան ափէն
կ'անցնի յարեւելս, կու հեռանայ մինչեւ
մօտ յափունս կարմիր ծովու, և կու ստո-
րագրէ շատ անուանի և ցանկալի տեղ մի,
կրօնական և կրօնաւորական նկատմամբ.
ամենահռչակ Ս. Անտոնի վանքն և յետին
հանգստարանն, որ քաղաքականօրէն հի-
մայ Իթֆիհ կամ Աթֆիհ վիճակին վերա-
բերի։ Այդ անապատ տեղն ընտրեց, կ'ըսէ,
» Անպա Անտունայն եգիպտացի, կամ Ան-
» տոնիոս, Աստղն անապատի և Հայր մի-
» անձանց, առաջին անապատակեաց։...
» Այս վիճակին Իֆթիհի եօթն եկեղեցիք
» կան, վեցն Դ.փտեաց, մէկն Հայոց, որ
կոչուի յանուն Ս. Գէորգայ վկայի »։ Շատ
վայելուչ և գրեթէ անկարելի էր Հայոց՝ —
որք ամենայն արեւելեայց հետ մեծապէս
պատուեն զհասարակաց պատուելի « Նա-
խակիզբն միանձանց », որում այս բա-
ռերով սկսուած արժանավայել շարական
մի երգած են և երգեն ամէն տարի, —
որ անոր վերջին ճգնութեան և ճգնակիր
մարմնոյն հանգստարանին մօտ յատուկ
վանք և եկեղեցի մ'ալ ունենային, որ թուի